ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿՈՄԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հասարակության հեղափոխական վերափոխման համար մղված պայքարում նոր էջեր գրեցին մեր երկրի բանվոր դասակարգը և գյուղացիությունը։ Երիտասարդ սերնդի ներկայացուցիչները իրենց հայրերի, մայրերի և ավագ եղբայրների ու քույրերի հետ միասին դուրս եկան վճռական պայքարի հին աշխարհի դեմ, կառուցելու նոր կյանքը, սոցիալիստական հասարակությունը։ Ռուս մեծ ժողովրդի նոր սերնդի հետ կողք-կողքի պայքարում էր նաև Անդրկովկասի բազմահազարանոց երիտասարդությունը։

Այս առումով լուրջ հետաքրքրություն է ներկայացնում պատմական գիտությունների դոկտոր Հ. Ավետիսյանի «Անդրկովկասի կոմերիտմիությունը պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի տակ» մենագրությունը, որը լույս է ընծայել ՀՍՍՀ ԳԱ հրատարակչությունը[1]։

Գրքի բովանդակությունը ընդգրկում է 1921—1925 թթ. ժամանակաշրջանը։

Ներածականում, հարուստ նյութերի հիման վրա, հեղինակը շարադրում է Անդրկովկասում կոմունիստական երիտասարդական կազմակերպությունների ստեղծման ու կազմավորման պատմությունը։

Ինչպես հեղինակն է նշում, հեղափոխական պայքարը Անդրկովկասում ընթանում էր ավելի բարդ պայմաններում։ Հայ, վրացի և ադրբեջանցի պրոլետարիատի, այդ թվում նաև երիտասարդության դեմ կանգնած էին ոչ միայն Ռուսաստանի հակահեղափոխական ուժերը, այլ նաև, մի կողմից էսերների և մենշևիկների մանր բուրժուական հաշտվողական կուսակցությունները, իսկ մյուս կողմից՝ վրացական մենշևիկների, մուսավաթների և դաշնակցականների բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունները։

1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից անմիջապես հետո Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Քութաիսում, Ղարաքիլիսայում, Ղարսում, Էջմիածնում և Անդրկովկասի այլ քաղաքներում ստեղծվեցին առաջին երիտասարդական կազմակերպությունները և խմբակները՝ «Բաքվի և նրա շրջանների ուսանողական պատգամավորների խորհուրդ», «Քաղաքի սովորողների միության կոմիտեն» Երևանում, «Կենտրոնական աշակերտական կոմիտեն» Թիֆլիսում և այլն։

Կյանքում իրագործելով ՌՍԴԲԿ(բ) VI համագումարի «Երիտասարդական միությունների մասին» բանաձևը, Անդրկովկասի բոլշևիկները ակտիվ պայքար ծավալեցին երիտասարդական միություններ ստեղծելու համար։ Այդ պայքարին ուղղություն էին ցույց տալիս Ստեփան Շահումյանը, Ալյոշա Ջափարիձեն, Միխա Ցխակայան, Մեշեդի Ազիզբեկովը, Անաստաս Միկոյանը և կուսակցության այլ ականավոր գործիչներ։ 1917 թ. աշնանը և 1918 թ. սկզբներին Անդրկովկասում արդեն ստեղծվեցին հեղափոխական երիտասարդության բոլշևիկյան կազմակերպություններ տարբեր անուններով. Վրաստանում և Հայաստանում՝ «Երիտասարդ սոցիալիստ-ինտերնացիոնալիստների կազմակերպություն» («Սպարտակ»), Ադրբեջանում՝ «Բանվոր երիտասարդության ինտերնացիոնալիստական միություն» (ԲԵԻՄ), «Մարքսիստական աշակերտական միություն» (Երևանում)։ Այդ կազմակերպությունների ականավոր ղեկավարներից էին՝ Ա. Ամիրբեկովը, Բ. Ջնելաձեն, Գ. Ոսկանյանը, Ս. Վարդանյանը, Յ. Ռաբինովիչը, Յա. Օկոնը (Վրաստան), Ղ. Ղուկասյանը, Ա. Խանջյանը (Երևան), Ս. Ազամիրովը, Բ. Բարխաշովը, Ա. Բրեյտմանը, Օ. Շատունովսկայան, Սուրեն Շահումյանը (Ադրբեջան)։ Ռուսաստանի կոմունիստական երիտասարդական միության ազդեցությամբ Անդրկովկասի «Սպարտակ» և «ԲԵԻՄ» մարքսիստական հեղափոխական երիտասարդական կազմակերպությունները վերակազմվեցին, որպես կոմունիստական կազմակերպություններ։

1919 թ. սեպտեմբերի 22—25-ին Բաքվում տեղի ունեցավ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կոմունիստական երիտասարդական կազմակերպությունների միացյալ կոնֆերանսը,

---

1 Г. А. Аветисян, Комсомол Закавказья под знаменем пролетарского интернационализма, Издательство АН Армянской ССР, Ереван, 1968.

ՌԿ(բ)Կ անդրկովկասյան երկրամասային կոմիտեի անդամ Ա. Միկոյանի ղեկավարությամբ։ Կոնֆերանսը ընտրեց ՌԿԵՄ Անդրկովկասյան մարզային կոմիտե, որի կազմի մեջ մտան Ալեքսանդր Ամիրբեկովը, Բորիս Բարխաշովը, Արտեմ Բելոուսովը, Յակով Բորշչևը, Ստեփան Վարդանյանը, Ղուկաս Ղուկասյանը, Բորիս Զնելաձեն, Իվան Կրավցովը (անդամներ), Օլգա Շատունովսկայան, Բառնաբ Ադամաձեն, Դայով Դեվդարիանին (թեկնածուներ)։ Ընթացիկ աշխատանքները կատարելու համար կոնֆերանսը ընտրեց երկու բյուրո. Թիֆլիսյան՝ Վրաստանի և Հայաստանի կոմերիտական կազմակերպությունների գործունեությունը ղեկավարելու համար, Բաքվի՝ Ադրբեջանի և Դաղստանի համար։

Աշխատության առաջին գլուխը կրում է «Ինտերնացիոնալիզմը Անդրկովկասի կոմերիտմիության զարգացման հիմքն է» խորագիրը, որտեղ մանրամասնորեն լուսաբանվում է անդրկովկասյան եղբայրական հանրապետությունների կոմերիտական կազմակերպությունների գործունեությունը ինտերնացիոնալիզմի գրոշի տակ։ Սովետական կարգերի հաստատումից հետո Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի կոմունիստական կուսակցությունները վճռական միջոցներ ձեռնարկեցին նոր, սովետական պետական ապարատի, ազգային արդյունաբերության ստեղծման համար, սկսեցին Անդրկովկասի հանրապետությունների սոցիալիստական վերափոխման աշխատանքները։ Նոր կյանքի կառուցման առաջին շարքերում էր քայլում երիտասարդ աշխատավորների բազմահազարանոց բանակը։

Նկատի ունենալով երիտասարդության կարևոր դերը սոցիալիզմի կառուցման գործում, Անդրկովկասի հանրապետությունների կոմունիստական կուսակցությունները մեծ ուշադրություն էին դարձնում կոմերիտական կազմակերպությունների մարտունակությունը բարձրացնելուն։ Ռուսաստանի կոմունիստական երիտասարդական միության (ՌԿԵՄ) Կենտկոմի Կավբյուրոն, որի առաջին կազմի մեջ էին մտնում Բ. Բաբայանցը, Բ. Բարխաշովը, Բելոուսկին, Ա. Բրեյտմանը, Բ. Զնելաձեն, Պ. Կարասիկը և Ստարոստինը, սերտ կապեր հաստատելով Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի, Լեռնականների Հանրապետության, Դաղստանի, Աբխազիայի հետ, ուշադրության կենտրոնում էր պահում կոմերիտմիությունը կազմակերպչորեն ամրապնդելու հարցերը։

Տեղերում կոմերիտական կազմակերպություններ ստեղծելու և նրանց աշխատանքները հունի մեջ դնելու համար կոմունիստական երիտասարդական միության Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի կենտկոմներին կից ստեղծվեցին շրջագայող հրահանգիչների կոլեգիաներ, որոնք իրենց հրահանգիչների միջոցով սերտ կապ էին հաստատում գավառների հետ և ղեկավարություն ցույց տալիս տեղական կազմակերպություններին։

Անդրկովկասի հանրապետությունների տնտեսական, քաղաքական համագործակցության նպատակով անհրաժեշտություն զգացվեց Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի կոմերիտական կազմակերպությունների միավորման համար։ Այդ մարզում եռանդուն գործունեություն ծավալեցին Ս. Օրջոնիկիձեն, Ս. Կիրովը, Ա. Մյասնիկյանը։ 1921 թ. սեպտեմբերին Բաքվում տեղի ունեցավ Ռուսաստանի կոմունիստական երիտասարդական միության համակովկասյան առաջին համագումարը, որը ներկայացնում էին Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի, Աբխազիայի, Լեռնականների հանրապետության և Դաղստանի 40 հազարանոց կոմերիտմիության անդամները, ընտրեց երկրամասային կոմիտե, որի կազմի մեջ մտան Ալեքսանդր Ամիրբեկովը, Ամիր Ամիրասլանովը, Բորիս Բարխաշովը, Համո Վարդանյանը, Բորիս Զնելաձեն, Սերգեյ Քալանթարովը և ուրիշներ։

Համագումարի պատմական նշանակությունը կայանում էր նրանում, նշում է հեղինակը, որ նա հռչակեց եղբայրական սովետական հանրապետությունների կոմունիստական երիտասարդության ինտերնացիոնալ միասնությունը և նրանց քաղաքական, տնտեսական օրգանական միավորման անհրաժեշտությունը ինչպես այդ հանրապետությունների միջև, այնպես էլ ՌՍՖՍՀ-ի հետ։

Այս գլխի վերջին, «Ինտերնացիոնալ միասնական շարքերում» բաժնում հեղինակը հետաքրքիր փաստեր է բերում միջազգային կոմունիստական երիտասարդական շարժման ակտիվ մասնակից ՌԿԵՄ կովկասյան երկրամասային կոմիտեի անդամ Ռաֆի Խիտարովի մասին։ Նա, այդ 20-ամյա երիտասարդ կոմունիստը 1921 թ. նոյեմբերին Կոմինտերնի գործկոմի մանդատով Գերմանիա է ուղևորվում և հսկայական աշխատանք կատարում Կոմինտերնի շուրջը Գերմանիայի հեղափոխական երիտասարդությանը համախմբելու գործում։ Նա նույնիսկ դառնում է Ռուրի և Հոենոսի կոմերիտմիության մարզկոմների քարտուղար, ընտրվում Գերմանիայի կոմերիտմիության Կենտկոմի քարտուղար, մոտիկ հարաբերության մեջ մտնում Գերմանիայի բանվոր դասակարգի առաջնորդ Էռնստ Թելմանի հետ։

Մենագրության երկրորդ գլուխը նվիրված է Անդրֆեդերացիայի ստեղծման ժամանակաշրջանում կոմերիտմիության գործունեությանը։ Ինչպես հեղինակն է բազմաթիվ փաստերով ապացուցում, անդրկովկասյան հանրապետությունների միավորումը, ինչպես նաև երիտասարդական կազմակերպությունների ինտերնացիոնալ համախմբումը հեշտությամբ չկատարվեցին։ Եղբայրական հանրապետությունների քաղաքական, տնտեսական միավորումը հանդիպում էր ուսանողության տարբեր խավերի, առևտրական և կուլակային միջավայրում բուն դրած հակակոմունիստական երիտասարդական կազմակերպությունների դիմադրությանը։ Վրաստանում, Հայաստանում և Անդրկովկասի այլ վայրերում գործող նացիոնալիստական երիտասարդական կազմակերպությունները («Երիտասարդ մարքսիստներ», «Բաղե», «Զախ» և «Աջ» ֆեդերալիստները, «Մակաբա» հրեական կազմակերպությունը Վրաստանում, «ամերիկական սկաուտները», «դաշնակցական երիտասարդական միությունը» Հայաստանում և այլն) հակասովետական պրոպագանդա էին մղում, հատկապես քայքայիչ աշխատանք տանում երիտասարդության շրջանում ընդդեմ երեք հանրապետությունների միավորման։ Սակայն կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ, կոմերիտմիության Անդրերկոմը և նրա տեղական կազմակերպությունները հսկայական աշխատանք ծավալեցին այդ հոսանքների դեմ և մաքրեցին երիտասարդական կազմակերպությունների շարքերը նացիոնալիստական և մանրբուրժուական ազդեցությունից։

Գրքի ծավալուն բաժիններից է «Անդրկովկասի կոմերիտմիությունը սոցիալիստական շինարարությունում» գլուխը։ Արտաքին ինտերվենտների և նրանց բուրժուա-նացիոնալիստական հլու կամակատարների պատճառով Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի, ինչպես և Ռուսաստանի ժողովրդական տնտեսությունը քայքայվել էր։ Վ. Ի. Լենինը մշակելով պատերազմից խաղաղ աշխատանքի անցման նոր տնտեսական քաղաքականությունը, նախանշեց սոցիալիստական շինարարության հոյակապ պլանը, պրոլետարական դիկտատուրայի տնտեսական խնդիրները։ Նոր տնտեսական քաղաքականության իրագործման համար պայքարում կուսակցության հավատարիմ օգնականը հանդիսացավ կոմերիտմիությունը։ Հեղինակը հանգամանորեն լուսաբանում է Անդրկովկասի կոմերիտական կազմակերպությունների գործունեությունը երկրամասի արդյունաբերության ու գյուղատնտեսության վերականգնման ու զարգացման, նոր կյանքի վերափոխման, կուլտուրական շինարարության ծավալման, ռազմա-ծովային նավատորմին շեֆական օգնություն ցույց տալու գործում։

Հեղինակը փութաջանորեն ուսումնասիրել ու գիտական շրջանառության մեջ է առել Անդրկովկասի կոմերիտական կազմակերպությունների հետաքրքիր, բազմաբովանդակ աշխատանքի ձևերն ու մեթոդները, նրանց հայրենասիրական բազմաթիվ նախաձեռնությունները՝ ուղղված սովետական կարգերի ամրապնդմանը։

Աշխատության բոլոր բաժիններում հեղինակը առաջին պլանի վրա է դնում ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների բարեկամության, տարբեր ազգերի սերտ համագործակցության ոգին։

«Անդրկովկասի կոմերիտմիությունը լենինյան պատգամների իրականացման համար պայքարում», վերջին գլխում Հ. Ավետիսյանը լուսաբանում է Անդրկովկասի կոմերիտմիության գործունեությունը կոմունիստական կուսակցության, կոմերիտմիության շարքերի լենինյան միասնության համար մղած պայքարում։

Հեղինակը գիտական շրջանառության մեջ առնելով Անդրկովկասի հանրապետությունների կոմունիստական կուսակցությունների և կոմերիտական կազմակերպությունների համագումարների, կոնֆերանսների, պլենումների որոշումները, ինչպես նաև ՌԿ(բ)Կ Կենտկոմի դիրեկտիվները, ցույց է տալիս այն հերոսական աշխատանքը, որ կատարել է Անդրկովկասի կոմերիտմիությունը բազմահազարանոց երիտասարդությանը լենինիզմի շուրջը համախմբելու, մեծ առաջնորդի պատգամները կյանքում իրականացնելու համար։

Աշխատությունը գրված է մարքս-լենինյան պատմագիտական մեթոդոլոգիայով, ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների բարեկամության, նրանց քաղաքական, գաղափարական, տնտեսական համագործակցության լենինյան սկզբունքների ոգով։ Գիրքը, որը Անդրկովկասի երիտասարդ սերնդի 1921—1925 թվականների պայքարի ու հերոսական աշխատանքի տարեգրությունն է, մեծ հետաքրքրություն առաջ կբերի միլիոնավոր երիտասարդության շրջանում։

Ա. ՍԱՌԱՂՅԱՆ